

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր դրույթներ

1. Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) աջակցում է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն պետական քաղաքականության իրականացմանը:
2. Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, այլ իրավական ակտերով, սույն կանոնակարգով:
3. Խորհրդին առընթեր ստեղծվում է հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով:

Խորհրդի հիմնական գործառույթները

4. Խորհրդի հիմնական գործառույթներն են՝
 - ա) համակարգել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի միջոցառումների իրականացման աշխատանքները և դիտարկումներ (մոնիտորինգ) իրականացնել դրանց նկատմամբ.
 - բ) հաստատել հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի կազմը.
 - գ) քննարկել հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունները.
 - դ) համադրել համապատասխան լիազորություններով օժտված մարմինների գործունեությունը՝ կոռուպցիոն դրսևորումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների մշակման ընթացքում.
 - ե) ձեռնարկել միջոցներ հակակոռուպցիոն ռազմավարությունից և միջազգային պարտավորություններից ու հանձնառություններից բխող՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած ալ միջոցառումների իրականացման համար.
 - զ) ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը.
 - է) կազմակերպել և համակարգել Հայաստանի Հանրապետության գերատեսչական հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման գործընթացը.
 - ը) իր աշխատանքների արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր կիսամյակ զեկույց ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին:

Խորհրդի գործունեության կազմակերպումը

5. Խորհրդի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան եռամսյակը երկու անգամ: Արտահերթ նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կամ Խորհրդի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ:

6.Խորհրդի նախագահը՝

- ղեկավարում է Խորհրդի աշխատանքը,
- Հայաստանի Հանրապետության Նախագահին է ներկայացնում Խորհրդի նախապատրաստած առաջարկությունները, ինչպես նաև Խորհրդի գործունեությանը վերաբերող այլ տեղեկատվություն,
- նշանակում է Խորհրդի նիստի անցկացման վայրը, օրը, ժամը, առաջադրում է օրակարգը,
- հրավիրում և վարում է Խորհրդի նիստերը,
- Խորհրդի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում:

7. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են Խորհրդի նապագահը և Խորհրդի մյուս անդամների պարզ մեծամասնությունը:

Խորհրդի անդամները նիստերին մասնակցում են անձամբ և իրավունք չունեն իրենց լիազորությունները պատվիրակել այլ անձանց:

8. Խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

9. Խորհրդի հրավերով Խորհրդի նիստին կարող են մասնակցել այլ անձինք:

10. Խորհրդի նիստերն արձանագրվում և ստորգրվում են նիստին ներկա բոլոր անդամների կողմից: Խորհրդի այն անդամը, որը համաձայն չէ Խորհրդի ընդունած որոշմանը, կարող է ներկայացնել իր գրավոր հատուկ կարծիքը, որը կցվում է որոշմանը և գրառվում Խորհրդի նիստի արձանագրության մեջ:

11. Խորհրդի և նրան առընթեր հանձնաժողովի գործունեության կազմակերպական-տեխնիկական ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը:

12. Խորհուրդն ապահովում է իր աշխատանքների լուսաբանումը և հրապարակայնությունը:

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովը

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի (այսուհետ՝ Մոնիտորինգի հանձնաժողով) հիմնական գործառույթներն են՝

ա) անցկացնել հակակոռուպցիոն ռազմավարության և գերատեսչական հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման նկատմամբ դիտարկումներ (մոնիտորինգ) ներգրավելով հասարակայնության, զանգվածային լրատվության միջոցների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներկայացուցիչներին.

բ) ուսումնասիրել և ընդհանրացնել կոռուպցիայի դեմ պայքարի գործում միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության պետական մարմինների փորձը և առաջարկություններ նախապատրաստել հակակոռուպցիոն պայքարի մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ.

գ) դիտարկումներ իրականացնել Հայաստանի Հանրապետության միջազգային

համաձայնագրերից բխող պարտավորությունների և հանձնառությունների, միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունների (երաշխավորությունների) ներդրման և կատարման նկատմամբ.

դ) կոռուպցիոն հնարավոր ռիսկերի բացահայտման նպատակով իրականացնել իրավական նորմատիվ ակտերի նախագծերի փորձաքննություն եւ ներկայացնել առաջարկություններ դրանց կատարելագործման վերաբերյալ:

14. Մոնիտորինգի հանձնաժողովն իր գործառույթներն իրականացնելու ընթացքում իրավունք ունի՝

ա) պետական իշխանության հանրապետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններից, օրենքով սահմանված կարգով, պահանջել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն.

բ) ձևավորել մշտական և ժամանակավոր աշխատանքային (փորձագիտական) խմբեր.

գ) իր նիստերին հրավիրել հասարակայնության, զանգվածային լրատվության միջոցների և քաղաքացիական ինստիտուտների ներկայացուցիչներին:

15. Մոնիտորինգի հանձնաժողովը եռամսյակային հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին:

16. Մոնիտորինգի հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է Խորհրդի կողմից հաստատված աշխատակարգի համաձայն:

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի աշխատակարգ

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեությունը կանոնակարգվում է սույն աշխատակարգով, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշումներով և իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Հանձնաժողովը կազմված է նախագահից և անդամներից:

Հանձնաժողովի յոթ անդամ ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների և խմբերի կողմից առաջարկված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ցուցակից:

Հանձնաժողովի կազմում ընդգրկված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների և խմբերի կողմից առաջարկված

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները փոփոխվում են տարեկան մեկ անգամ՝ ռոտացիոն կարգով՝ Խորհրդի որոշմամբ:

Հանձնաժողովի նախագահը և անդամները Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

Հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝

ա/ անցկացնել հակակոռուպցիոն ռազմավարության և գերատեսչական

հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման նկատմամբ դիտարկումներ /մոնիտորինգ/՝

ներգրավելով հասարակայնության, զանգվածային լրատվության միջոցների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներկայացուցիչներին.
բ/ ուսումնասիրել և ընդհանրացնել կոռուպցիայի դեմ պայքարի գործում միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության պետական մարմինների փորձը և առաջարկություններ նախապատրաստել հակակոռուպցիոն պայքարի մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ.

գ/ դիտարկումներ իրականացնել Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերից բխող պարտավորությունների և հանձնառությունների, միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունների /երաշխավորությունների/ ներդրման և կատարման նկատմամբ.

դ/ կոռուպցիոն հնարավոր ռիսկերի բացահայտման նպատակով իրականացնել իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն և ներկայացնել առաջարկություններ դրանց կատարելագործման վերաբերյալ:

Հանձնաժողովն իր տարեկան գործունեության աշխատանքային պլանը և դրա իրականացման ժամանակացույցը ներկայացնում է Խորհրդի հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահը՝

- ղեկավարում է Հանձնաժողովի գործունեությունը,
- Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում Հանձնաժողովի տարեկան աշխատանքային պլանը և դրա իրականացման ժամանակացույցը,
- իրականացնում է աշխատանքների բաշխում Հանձնաժողովի անդամների միջև,
- նշանակում է Հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը, ժամը և հաստատում նիստի օրակարգը,
- հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը,
- ստորագրում է Հանձնաժողովի որոշումները,
- առաջարկություններ է ներկայացնում Խորհրդին,
- ներկայացնում է Հանձնաժողովը այլ մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում:

Հանձնաժողովի անդամը՝

- մասնակցում է Հանձնաժողովի աշխատանքներին,
 - առաջարկություններ է ներկայացնում Հանձնաժողովի գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ,
 - Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ համակարգում է ստեղծված աշխատանքային խմբի կամ խմբերի գործունեությունը և ներկայացնում է զեկույց՝ դրանց աշխատանքների արդյունքների վերաբերյալ,
 - իրականացնում է Հանձնաժողովի գործունեությունից բխող այլ աշխատանքներ: Հանձնաժողովի անդամը նիստին մասնակցում է անձամբ:
- Հանձնաժողովի անդամի կողմից նիստերին 3 անգամ անհարգելի բացակայության դեպքում Հանձնաժողովի նախագահն իրավասու է Հանձնաժողովի տվյալ անդամի փոփոխման միջնորդությամբ դիմել Խորհրդին, իսկ Ազգային ժողովի պատգամավորական խմբի, խմբակցության կամ հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Հանձնաժողովի անդամի դեպքում՝

համապատասխանաբար խումբ, խմբակցությանը կամ հասարակական կազմակերպությանը:

Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Նիստերը գումարվում են Հանձնաժողովի նախագահի կամ Հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ, ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

Հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ նիստ գումարելու նախաձեռնության դեպքում, տվյալ անդամները դիմում են Հանձնաժողովի նախագահին՝ ներկայացնելով նիստի օրակարգի նախագիծը: Հանձնաժողովի նախագահը փաստաթղթերը ստանալու պահից 10-օրյա ժամկետում հրավիրում է Հանձնաժողովի նիստ:

Հանձնաժողովի նիստերը վարում է Հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Հանձնաժողովի անդամներից մեկը:

Հանձնաժողովի նիստի օրակարգը և քննարկվելիք հարցերի վերաբերյալ անհրաժեշտ նյութերը Հանձնաժողովի անդամներին են ուղարկվում ոչ ուշ, քան նիստից մեկ շաբաթ առաջ:

Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե ներկա են Հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ,

Հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ եվ ստորագրվում են Հանձնաժողովի նախագահի կողմից:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք եվ քվեարկում է կողմ կամ դեմ:

Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է:

Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը նիստի ավարտից հետո եռօրյա ժամկետում ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի կողմից և ուղարկվում Հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ: Եթե

Հանձնաժողովի անդամը Հանձնաժողովի ընդունած որոշման վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա նրա ցանկությամբ այն կցվում է նիստի արձանագրությանը:

Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրների լուծման համար իրավունք ունի՝

- պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու այլ կազմակերպություններից օրենքով սահմանված կարգով պահանջել և ստանալ իր գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվություն, վիճակագրական տվյալներ ու այլ փաստաթղթեր,
- Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, ստացված փաստաթղթերի հիման վրա կատարել դիտարկումներ և հետազոտություններ,
- կազմել աշխատանքային խմբեր կամ ենթախմբեր,
- առանձին հարցերի քննարկումները նախապատրաստելու համար իր աշխատանքներին ներգրավել փորձագետներ, միջազգային

կազմակերպությունների ներկայացուցիչներ,

- հանձնաժողովի նիստերին հրավիրել զանգվածային լրատվության միջոցների, միջազգային, հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, անհատներ:

- կազմակերպել կոռուպցիայի դեմ պայքարի հարցերին նվիրված համաժողովներ, սեմինարներ, հեռուստահաղորդումներ, ինչպես նաև տարբեր բնույթի այլ քննարկումներ:

Հանձնաժողովն իրականացնում է իր աշխատանքների լուսաբանումն ու ապահովում է իր գործունեության հրապարակայնությունը:

Աշխատանքային խումբը կամ ենթախումբը կազմավորվում է գերատեսչական, ճյուղային կամ կոնկրետ հարաբերություններում դիտարկումներ իրականացնելու նպատակով: Խմբերի կամ ենթախմբերի կազմը, գործունեության շրջանակը և ժամկետները սահմանվում են Հանձնաժողովի որոշմամբ: Աշխատանքային խմբերը կամ ենթախմբերը գործունեության ընթացքում նախապատրաստում են զեկույցներ, որոնք Հանձնաժողովին է ներկայացնում տվյալ խմբի գործունեությունը համակարգող Հանձնաժողովի անդամը: